ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 15. ՍՊԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1 Յուրաքանչյուր սպարտացի տղամարդ ստանում էր հավասար չափի հողաբաժին՝ այդ հողի վրա ապրող հելոտներով: Հելոտներն իրենց աշխատանքով պետք է ապահովեին սպարտացու ընտանիքի բոլոր կարիքները: Սպարտացիների հիմնական զբաղմունքը նվաճված բնակչությանը հնազանդ պահելն էր և նրանց ստեղծած բարիքները յուրացնելը: Դրա համար անհրաժեշտ էր ունենալ հատուկ կազմակերպություն՝ պետություն:

2 Տղաներն ամեն օր զբաղվում էին ֆիզիկական վարժանքով, սովորում էին վազել, ցատկել, լողալ, նիզակ և սկավառակ նետել: Կլոր տարին շրջում էին ոտաբոբիկ և կիսամերկ, քնում էին չոր գետնին: Նրանց վարժեցնում էին դիմանալ ցավին, սովին, ծարավին: Տղաներին սովորեցնում էին երգել, գրել-կարդալ, ենթարկվել հրամաններին և կարգապահությանը, խոսել կարճ և պարզ: Այդպես խոսելը անվանում ենք ***լակոնիկ խոսք***: Որպեսզի տղաները վարժվեն և չվախենան արյուն թափելուց, նրանց ստիպում էին սպանել հելոտներին:

Սպարտացի տղաները մշտապես թաքուն հետևում էին հելոտներին՝ կանխելու ապստամբության ցանկացած փորձ: Նրանք նկատի էին առնում, թե ամեն մի գյուղում ովքեր են ամենաուժեղ և հեղինակություն վայելող հելոտները, որոնք կարող են դառնալ ապստամբության ղեկավար:

Տարին մեկ անգամ Ծերակույտը որոշում էր մի քանի օր թույլատրել սպանել առավել վտանգավոր հելոտներին: Թույլատրված օրերին, դիմակավորված սպարտացի երիտասարդները գիշերով մտնում էին գյուղերը և նկատի առնված հելոտներին ձերբակալում, տանում իրենց հետ: Նրանց այլևս ոչ ոք չէր տեսնում:

Չնայած սպարտացիների այս դաժանությանը, հելոտները քանիցս ապստամբել են, բայց սպարտացիներին միշտ հաջողվել է ճնշել ապստամբությունները: